ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2015Թ.-Ի ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՅԱԿՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2015թ.-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից առաջին եռամսյակում նախատեսվել և իրականացվել է 10 աուդիտ, որից 8 միավոր մարզային ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներում,2 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում : Նշված ՊՈԱԿ-ներում և ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ: Աուդիտի ստանդարտների համաձայն,այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը, գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 3 նիստ, քննարկվել աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների, առողջապահական ՓԲԸ-ների ղեկավարին տրվել են հանձնարարականներ, ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ: Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվում է վերահսկողության գործընթաց:

Աուդիտի 6 հաշվետվություններ տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի vdzor.gov.am պաշտոնական կայքում՝ ստուգումների արդյունքներ բաժնում:4 հաշվետվություն կտեղադրվեն Ներքին աուդիտի կոմիտեի նիստում ներկայացնելուց հետո:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2015 թ.-ի ներքին աուդիտի առաջին եռամսյակի ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, մուտքագրվում են ներքին աուդիտի տեղեկատվական միասնական համակարգ :

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ **Վ. Կարապետյան**